

ՄԱՐԱԲԱ ՄԾՈՒՐՆԱՅԻ

ԿԱՐ

ԿԵՂԵՐ-ԱԳԱԹԱՆԳԵՂԱՍ

11

(Շաբ. տես յէջ 60)

ԱՌԱՋ բերելով զիտնականների ինձ ծանօթ կարծիքները՝ Անանուն հատուածի վերաբերմամբ, եւ զիտաւորութիւն չունիմ վիճաբանել յիշեալ իւրաքանչիւր կէտի մասին, որին ես որ եւ է պատճառով՝ համաձայն չեմ. այդ ինձ շատ հեռու կը տանէր եւ կ'ընդլայնէր ներկայ զլիկ սահմանները, զուցէ մինչեւ այս հարցին վերաբերեալ բոլոր՝ միասին վերցրած հետազոտութիւնների ծաւալը։ Ներկայ գէպըսմ ես աւելի յարմար եմ տեսնում յայտնել իմ կարծիքս անկախ նախորդ հետազոտութիւններից՝ կենտրոնանալով հետեւեալ հինգ կէտերի վերայ, որոնք՝ ըստ իս, սպառնում են մեզ հետաքրքրող խնդիրը։

Ա. Ի՞նչ է ներկայացնում Անանուն հատուածը եւ ի՞նչ ազդեւորների հիման վերայ է նա կազմուած։

Բ. Ի՞նչ նպատակ ունէր հատուածի հետեւեալը։

Գ. Ի՞նչու է հատուածը կապուած յատկապէս Սեբեոսի պատմութեան հետ, որպէս նորա սկիզբը։

Դ. Ե՞րբ է գրուած այդ հատուածը։

Ե. Որպիսի միճակում է հասել մեզ հատուածը։

Ա.

Անանուն հատուածի էութիւնը եւ նորա աղբիւրները

Ըստ ինքեան հասկանալի է, թէ որքան մեծ նշանակութիւն ունի որ եւ է անվանք

գրուածքի նշաններ ունեցող գրական գործի ուսումնասիրելը՝ արտաքին ձեւական կողմից, նորա՝ այսպէս ասած, ներքին, այն է՝ լեզուի եւ գրութեան ուսումնասիրելը, նայն իսկ առանելու։ Այս ազդեցութեամբ կատարած քննադատչական հետազոտութիւնը հանդիպեցնում է հետաքրքրի գիտների. օրինակ, գրուածքի իսկական աղբիւրները քաջատարելոյ, նաեւ կազմութեան ժամանակը որոշելու եւ այլն վերաբերմամբ, հետեւանքները՝ որոնց հազիւ թէ կարելի լինէր հասնել, եթէ մենք այլապէս վերաբերուէինք անվանքը գրուածքին։

Այդ իսկ իմաստով եւ գրադոկեցի Անանունի հետազոտութեամբ, որը՝ միտադարձաբար եմ յուսալ, թէ բառական արդիւնաւետ հետեւանքների հասցրեց ինձ։ Յիշեալ հատուածի բնագրի մանրամասն հետազոտութիւնից եւ եկայ այն եզրակացութեամբ, թէ այդ հատուածը զարմանալի նմանութիւն ունի նախ եւ առաջ եւ ամենից ասելի՝ Սեբեոսի Պատմաբան հետ, որին նա կցած է եւ մեքենայաբար։ Այս նմանութիւնը, որ երբեմն նոյնութեան է հասնում, նկատուում է ոչ թէ երկու գրուածքի ոճի եւ գրութեան մէջ, նոյնազարմածքների եւ լեզուի մի քանի ձեւերի մէջ՝ վերաբերութեամբ ոչ միայն քերականութեան համաձայնութեան եւ բառապարտութեան, այլ եւ այդ երկուսի մէջ միայն պատահող բնորոշ աշխարհագրական եւ ազգագրական անունների։

Միտ գնեմք այդ հարցի մանրամասնութիւններին եւ ամենից առաջ նշանակենք Անանունին եւ Սեբեոսին ընդհանուր գարձուածքները եւ բնորոշ բառերը։

1) Սեբեոսը, որպէս Անանունի աղբիւր։ Բառերը եւ զարմածքները, որոնք ընդհանուր են Անանունին եւ Սեբեոսին,

ԱՆԱՆՈՒՆ

ՍԵԲԵՈՍ

ԵՂ

ԵՂ

1. (չորսու) վիպասանութիւն

(յիշատակել) առաջին

առաջնական կայանք

38.

88.

ԱՆԱՆՈՒՆ	ՍԵՔՏՈՍ
Էջ	Էջ
2. (նոյնպէս 3, 6 և 7 էջ.) Հնա- զանդէլի ի ծառայութիւն .	79, 81, 106, 107, 138, 144, 149 (երկէցս), 150, 151, 152.
— լեռնոտն	148.
— ամենայն աղիւ (նոյնպէս և Յ. Գրքում)	61, 92.
— (նոյնպէս A և B էջ) ապի- կալութիւն ծառայութեան,	106.
3. մարտիկ	21.
— տուն հայրենի	150.
— (նոյնպէս 7 էջ) ի շէմի հա- րեալ	23, 63.
— վարստական զնալ	81.
— (նոյնպէս 9 էջ) ոչ կարաց զբէմ աւանդ	34, 51, 69, 104, 409, 150.
— զիմեալ քալ ի վերայ	37, 109.
— զիմեալիբ (նոյնպէս և Ս. Գրք- քաւմ)	66.
— (նոյնպէս A և B էջ) սպա- ռապէս, սպառազինութիւն	22, 26, 39, 35, 38, 39, 67, 70, 81, 93, 107, 142.
A. կուռ սպառազինութիւն	67, 70.
— պնդել զհետ (սեռակ. հոլով)	65, 94, 107.
— թափեցից ի քեզ զկապարն	75.
— վարստական (ի կուռ սպա- ռազինութիւն)	74, 99.
— ոչ կարացեալ վարստական (յիւր զորացն բազմութիւն, նոյնպէս 7 էջ)	
B. լեռնակողմն	29, 37, 93.
— առապար	119.
— զետեղ	106.
— ապրտամբիլ ի ծառայութեան	31, 46, 71, 72.
7. ապրտամբեալ ի բաց փալ ի ծառայութեան	81, 147, 151, 152.
8. և եղև պատերազմ մեծ առ Անիոք քաղաքաւ	81.
— կապեալ առիւք և ձեռաւք	41, 70, 93.
— հակառիւ ընդդէմ (Արշակայ)	112 և 74, 75.
— «անկանի ի վերայ նորա յան- կարծակի»	108.
— «ի ձեռն ծամանակի»	73, 93.

ԱՆԱՆՈՒՆ	ՍԵՔՏՈՍ
Էջ	Էջ
8. նեղ վայր	52.
— սպառել զգորն	50, 67, 71.
— ձերբակալ առնել (նոյնպէս և Ս. Գրքում)	38, 39, 52, 59,
— ընդ առաջ ելանել	68.
9. «սակիտպատ դաշոյք»	39.
— Ասպետ	56, 98, 100— 103, 108, 111, 114, 115, 114 — 116, 136.
— հրամանատար	99.

Աշխարհադրական և ազգագրական անուն-
ները, որոնք ընդհանուր են Անանունին և
Սեքտոսին.

ԱՆԱՆՈՒՆ	ՍԵՔՏՈՍ
Էջ	Էջ
7. նոյնպէս 8 և 9 էջ, երկէցս) Պարթեւք	34, 36, 57, 59, 113, 137.
— (նոյնպէս 9 էջ, երկէցս) Թե- սալացիք	23, 28, 30, 36, 137, 148, 152.
— (նոյնպէս 9 էջ) արքայ Թե- սալացւոց	33, 36.
— (նոյնպէս 8 էջ) Արեւելք, երկիր Քուշանաց	65, 13 և 47, 60, 121.
— (նոյնպէս 8 և 9 էջ, (երկէցս) Բահլ Դահաւատն	40, 67.
— (նոյնպէս 9 էջ, (երկէցս) Քուշ- անք	25, 30, 60, 64 — 67, 137.
— (նոյնպէս և 9 էջ, (երկէցս) «Բահլ Դահաւատն երկիր Քուշանաց»	67 նոյնպէս 30.
8. Կապկոհ (լեռն)	37, 143.
9. Մծբն քաղաք	33, 45.
— «ի Մրժանայ, էջ 10—Մըր- ժուին	27*, 38, 92 (երկէցս).

* Ս. Գեորգիոսի ձեռագրական մէջ բաց
է թողնուած 37 էջ, «Մրժուին», ճիշտ Գ. Գեորգի
ձեռագրական թիւը, (էջ 64).

ԱՆՈՒՄ	ՍԵՐԻՈՍ
Էջ	Էջ
9. Արուստան . . .	33, 37, 45, 123, 144, 146.
— Տաճկաց (երկիր) . . .	37, 146; 152, 153.
— Ասորաց (երկիր) . . .	33, 37, 60, 72.
— Կապուսկեսյ . . .	146 (Կապուսկեսյ կաջիք).
— Կիւղիկէս } . . .	81.
— Կիւղիկէսիք } . . .	28, 131.
— « Լեւոն մեծ Կովկաս » . . .	148 և 29.
— « Ամուր աշխարհն Մարաց » . . .	92 և 107 (Հմտ. նաեւ « Ամուր երկիրն Գեղմայ ») 57, 58, 59.
— « Լեւոն Զարաթ » . . .	37, 94.
— Նար-Շերակ . . .	37.
— Միջագետք Ասորաց . . .	24, 71, 72, 76, 101.
— Աշխարհ, երկիր Հայոց . . .	ամենուրեք.
9 և 10. Հայաստան աշխարհ, երկիր . . .	ամենուրեք.

Յիտոյ՝ Անանունի այսպէս անուանելով « Ազաթանգեղան արձանագրութեան » առաջին տողերը՝ իմ կարծիքով, Սերիոսի խոսքով Ապրուէղի պատմութեան (590 — 627 թ.) յ առաջ տարան ի համառոտութիւնն են :

Անանուն, էջ 1-2. Սերիոս, էջ 35. Մանուկեղան գրիչ զրեցի ի վերայ արձանիս այսորիկ իմով ձեռամբ զամս առաջին թագաւորացն Հայոց, հրամանաւ քաղին Տըր-դատոյ՝ առեալ ի դիւանէն արքունի, զոր փոքր մի եւս պալատիւրում տեղւոյն տեսցես զպատմեանն : Բայց եւ նախ առաջին զվեպս յահելն արքայ՝ ե յարի այրն ոկոսայց առել, նախ առ իսկն եւ ցնն պատմութիւնս՝ ուստի եղեւ

ակի զքն ամենայն երկրի շինուածոց լրմանց և անտի ի սոյն պատուածոյ անիծեալն : առեալ տեղի՝ յաւգել զգրուցակարգութեան վեպս՝ հսկայազանցն և զտառապելս ունայնս առ հանգար զաւարացն :

Մանուանդ պէտք է մասնացոյց անել Անանունի մէջ Արշակ Պարթեւի (Բ զար նի. ք. Գս.) իւր որդի՝ առաջին հայ Արշակունի Արշակի թափն հանած սահմաններէ առասպելական մանրամասնութիւններէ վերայ, որոնք բառացի նման են Սերիոսի ճիշդ — պատմական ցուցմունքներին : Հերակլի պատմագիրը առաջ է բերում յայտնի յափշտակիչ (usurpator) Վահրամ Միհրեանդակի (նոյնը և Զուրին, Զ զարի վերջին) Հայոց իշխաններին ուղղած նամակը, ուր այս վերջինս, թուելով այն բոլոր երկիրները, որոնք մի ժամանակ Հայոց թագաւորութեան սահմաններէ մէջ էին մտնում, խոստանում էր վերականգնել այդ տէրութիւնը, եթէ Հայերը համաձայնին օգնութիւն հասցնել նորան խոսքով Ապրուէղի գէմ :

Անանուն, էջ 9. Սերիոս, էջ 37. Մանուկեղան գրիչ զրեցի ի վերայ արձանիս այսորիկ իմով ձեռամբ զամս առաջին թագաւորացն Հայոց, հրամանաւ քաղին Տըր-դատոյ՝ առեալ ի դիւանէն արքունի, զոր փոքր մի եւս պալատիւրում տեղւոյն տեսցես զպատմեանն : Բայց եւ նախ առաջին զվեպս յահելն արքայ՝ ե յարի այրն ոկոսայց առել, նախ առ իսկն եւ ցնն պատմութիւնս՝ ուստի եղեւ

բեւեղեցի և անցանէ առ
 դահմանաւն առ ամուր
 աշխարհաւն Մարաց և
 հասանէ ի շնամն Զա-
 րասպ, և անցանէ առ
 Նոր Եփրատ երկրաւն :
 Եւ յաշարկէ զնա ի
 Մթժամայ (Էջ 10 -
 « Մթժամ ») ընդ յա-
 բեւեւեւսսս :

Թողնուած տես Կ. Պօլ-
 սի հրատրոյ. էջ 84) և
 գնոր Եփրատն մինչեւ
 ցասմանս Տաւադ .
 զի առնախնեաւքն իսկ
 ձեր լեաւ է (sic !) և
 ընդ արեւմտոս մինչեւ
 ցկեաւորիս Կապադո-
 կիացոց : Եւ ես մի ին-
 քնացիք զան գկրասպ
 (պեաք է լինի՝ (Ղ) Զա-
 րասպ, ինչպէս էջ 94)
 անցանել յայնկոյսս :

Վերջապէս և Անանունի հոշակաւոր յա-
 տաբարանք՝ յիշեցնում է մեզ մի և նոյն Սե-
 բիոսին : Ինչպէս Հերակլի պատմագիրը,
 խոստովանելով՝ երեւի թէ համաստութիւնից,
 իւր անպատրաստ լինելը այնպիսի նշանաւոր
 ձեռնարկութեան համար, որպիսին է ընդար-
 ձակ և բազմաբարդ պատմական աշխատու-
 թիւն կազմելը, յենովում է իր վերջաբանի
 մէջ “ ի կարգս ուսումնասիրաց », այնպէս
 էլ Անանունը, ձեռք զարկելով իւր աշխա-
 տութեանը և լինելով “ ոչ վարժ խոզակի », զիմում է “ Մաբաբայ փիլիսոփայի
 մատենին », օգնութեան : Մի բանի բան էլ
 յարասութիւն է (paraphrase) Սեբիոսի եր-
 կու յատաշարանների (էջ 23 և 35) :

Անանուն, էջ 4. Սեբիոս, էջ 131. Արդ
 Եւ եղեւ ոչ ի կա-
 մայս կաւն պի-
 մայից վարժ
 ի կարգի պատմութեանս
 խաւաւի զանա-
 ըստն անհաւա-
 րտաբարել՝ (ես կար-
 ի ու հրէշց մտաց »

* Այլ և այլ եմթադրութիւններ կամ “ զամստա-
 բազրել », բառի ըմթերցանութեամ առթիւ. — հան-
 գուցիս պրոֆ. Պատկանեան (էջ 1 Սեբիոսի ռու-
 սերէն թարգմ.) կարգում էր “ իմ ստորագրել »,
 ճեթթեր (Mar Abbas von Nisibis, լ. օ. էջ 84) “ ամ-
 ստերիւր գրել », — Ն. Գ. Մաս (Визант. Врем.
 էջ 279) — “ զայմ ստորագրել » (== զալլիմ ստո-
 բազրել) : Խոստովանում եմ, որ բոլոր յիշեալ ըմ-
 թերցումներն մէջ ես փոքր իմէ լուծագրասութիւն
 եմ տեսնում : Դս առաջարկում եմ “ զամստաբա-
 զրել », կարդալ “ զամստորագրել », կամ “ զամ-
 ստորագրել », (ժամանակ), պատիւն օք. ամցեալ

դոււմ եմ “ զանստա-
 բազրել » ժամանակ
 և զնախնի քաջացն
 ձեռնարկելով դրոշ-
 մել վիպասանու-
 թիւնս, զիմ յիշա-
 տակել զաստապելս,
 և ինոյն շարագրելով
 ստացից զան ի յա-
 կայսն եղելոյ, և ցու-
 ցից հա մա աւաւ-
 տիւք զարդեաց
 ժամանակաց և զա-
 ղետիցս վերաբերու-
 թեան, զամս և զա-
 ւորս հինգ թագա-
 ւորացն յիշատակե-
 լով :

Անդ հայելով ի
 մատենն Մա-
 բաբայ փիլիսո-
 փայ Մթժամաց-
 ւոյ : ...

Ի մոց, և ոչ ըստ աբ-
 ժանաւոր շնորհի
 գերտնթեան : այլ սա-
 կայն անդր հայեցեալ ի
 կարգս ուսումնասի-
 բացն, և հաստատեցից
 մարգարէական բարբա-
 ոսփը : ...
 Էջ 35... Եւ արդ ես
 ճառեցից զեղիւղեցն
 յերկրի զանցից կործան-
 ման առասպելս վիպա-
 սանելով, զի վերաւստ
 զարթոյցանել սրտմտու-
 թիւնս : ...

Էջ 23-24... Յետ այ-
 սորիկ զարթուցեալ ան-
 հուն բարկութիւն և ըշ-
 վերջին ցաղիկս հինին,
 որ ի կողմանս հարաւոյ...
 Զայս ամենայն կամեցայ
 ի ձեռն դրոյս այսորիկ
 կարճ առաւառ ձեռ վի-
 պասանել :

Այնքեւ է, որ չէ կարելի ենթադրել
 հակառակը, այսինքն Անանունի բնագրի (ընդ
 ամենը 10 երես) ազգեցութիւնը Սեբիոսի
 վերայ : Հերակլի պատմագրի ընդարձակ աշ-
 խատութիւնը ունի իւր ուրոյն որոշ կերպով
 զծած կերպարանքը՝ բոլոր միւս հայ պատմ-
 մագիրների կարգում՝ իւր լեզուի, ոճի, բա-
 ռագրութեան և տեղագրական անունների
 յատկանշելով, որոնք ծայրէ ծայր անցնում
 են ամբողջ հեղինակութեան միջով և սերտ
 կապուած են նորա բովանդակութեան հետ :

դերբայի վերջաւորութեամ վերայ, որ շատ սովոր-
 ակամ է ձեռագիրներում : Այս մշամակում “
 “ ամստորագրել ”, որ միանգամայն
 յարմարվում է թէ համաձայնութեամ և թէ տղա-
 մարմնութեամ պահանջներին : Արդ “ զամստո-
 բազրել ժամանակ, և “ զմախմի քաջացմ վիպա-
 սանութիւնս, կը լծմիմ իմդիր սեռի “ զըռշմել »,
 բայիմ, որ կախում ունի “ և երեւ, մախադասու-
 թիւնից : Պատկեր “ զամստորագրել », բառի վեր-
 չիմ վանկի վերայ կարող էր ժամանակից ըմ-
 մել : Հեղինակը որոշ կերպով յայտնում է իւր դի-
 տաւորութիւնը՝ մկարագրել ամցեցը այնպիսի մի
 ժամանակից, որ ոչ ոք զեւ ստորագրած չէ :

այն ինչ Անանուն Հատուածը ներկայացնում է, ինչպէս կը տեսնենք, խալտաբղէտ Հաւաքածու զանազան աղբիւրներից: Բայց ի դրանից, Սերբոսի Պատմութիւնը՝ ի զանազանութիւն Հատուածի անվաւեր և առասպելական բովանդակութեան, ներկայացնում է ճիշտ — պատմական անցքեր, որոց նկարագրող Հեղինակը եղել է ոչ միայն ժամանակակից, այլ ոչ սակաւ անգամ և ականաւտես:

Ստորեւ մենք կը տեսնենք, որ՝ բաց ի արտաքին նմանութիւնից, Անանունի և Սերբոսի մէջ կայ և ներքին կապ:

ԹԻՎԻ. Լ. ՆԱԶԱՐԵԱՆՑ

Շարայարկի



ԵՐԵԿՈՅԹ ՄԸ Ի ՌԵՔԱՆԱԴԻ

ՉԱՐՄԱՆԱԼԻ և ուշադրութեան արժանի է միջին Իտալիոյ Մարքէ (*Le Marche*) գաւառին՝ միջին դարէն սկսեալ զանազան ժամանակ մեր ազգին տուած հիւրընկալութիւնն: Կարծես երախտագիտութեան տուրք մ'է՝ զոր յանգէտս կը Հատուցանէ Ներսէս Պատրկի Հայկազնոյ յիշատակին, որ զայն Գոթաց աւարատութենէն ազատեց: Եթէ նոյն իսկ իտալացի պատմիչաց ոմանց աւանդութեան Հաւատանք, ս. Լիբերիոս — որ ընդ ս. Կիրակոսի և ս. Մարկելլինոսի՝ Անկոնայի գլխաւոր պաշտպան սուրբերն են, — որդի էր Հայազգի Թովհանէս (?) անուն մեծ իշխանի մը, և թողլով Հայրենական փառքն ու Հարստութիւնը՝ Անկոնա եկաւ ու կրօնաւորեցաւ¹: Գասղէֆիտարտոյի Հայ կուսանքն, որ 1787էն սկսեալ յիսուն տարի Հոն բնակեցան և յետոյ Անկոնա փոխադրուեցան, դարձեալ այս վերջին քաղա-

քին մէջ պարբերաբար յիշուած Մուրատ, Հաճի, Ումուտ, Նուտի (Չպար), Աբէլ, և այլն, զերդաստաններն, ըսածնոս Հաստատութիւն են: Մերազնից այս գաւառս վաճառականութեան Համար այդչափ յաճախելու և պատճառն անշուշտ Թուրքիոյ Հեղափոխութիւնն էր, որոց մէջ անջրպետ կամ լաւ եւս կապ մ'էր միութեան՝ միայն Ալբրուկան ծովը, որոյ միջոցաւ երկու աշխարհաց բերքերն կը փոխանակուէին, մանաւանդ աւրեւելեանն յիտալիա: Դժբաղդաբար 1872էն ի վեր ազգային ամէն շտապիդ ջնջուած կամ ցրուած է քաղաքէս. և յետին Հոգեւոր առաջնորդն Հարկադրուելով մեկնել այտին՝ վեղարաւոր Հարք ժառանգած են Հայոց վերջին եկեղեցին, զոր զեռ շատր ի քաղաքացեաց՝ Եկեղեցի Հայոց կ'անուանեն: Մէջը պարուհակեալ Հինգ խորանաց երեքն ազգային սրբոց նուիրեալ են. ս. Գրիգոր լուսաւորիչ, որոյ անուամբ կը կոչուի եկեղեցին, ս. Հովսէփս մէ կոյս, (զոր կրօնաւորք ս. Իփիգենի Հայկազն կը կոչեն) և ս. Անաստասիա կոյս:

Մեր ազգային գաղթականութեան պատմութեան թէ և տխուր՝ այլ ոչ նուազ հետաքրքրական էջերն մին կը կազմէ այս, որոյ լուսարանութիւնը կ'ակնկալենք նիւթոյն քալ խորամուկ պատկառելի բանասիրի մը գրէն:

Վերոյիշեալ տողերուս գրութեան առիթ տուաւ ինձ՝ Անկոնայէ երկաթուղեաւ ժամ մի Հեռի՝ Ռեքանադիէ Հայկական որսանոցին ի նպաստ տրուած բոլորովին ընտանեկան երեկոյթ մը: Որբանոցիս Հաստատութեան և ներքին կազմութեան միայ երկիցս խօսուած ըլլալով², չեմ ուզեր ընթերցողաց զնոյն երկրորդել: Սա կէտս միայն կը փափաքեմ շեշտել, որ մինչ ազգիս ուրիշ տարաբաղդ որբերը՝ արեւելքէ դուրս Հաստատութեանց մէջ՝ բոլորովին արեւմտեայ ձուլելու ջանք կ'ըլլուին, ընդհակառակն Հոս՝ թէ և օտար երկրից՝ այլ ազգային յարկի ներքեւ՝ նախան. Հայոցդ ոգւով կը պահպանուին մեր մայրենի

1. Saracini. — Notitie storiche d'Ancona. 1675: — N. M. G. — Cenni storici dei santi protettori di Ancona.

1. Տ. Բ-Վ-Կ. 1897, թիւ 321-534